



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԻ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՉԵՒ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՈՐԷՆ
ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՅՏՈՆԷՒԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱԻԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Այս Ներմէս առակելեալ էր իմաստութեամբ քան զյուղին ի
ժամանակի անդ, ո՞չ միայն քան զյարդապեսու հայոց, այլն քան
զՅունաց և զԱսորուց ավերաց՝ մինչ զի համբաւ իմաստութեամ նո-
րու տարածեցու ընդ ամենայն ազգա»:

Պատմագիր՝ Կիրակոս Գանձակեցի

Փրկչական երկրորդ հազարամեակի սեմին, երբ արկմուտքից Բիհզանդա-
կան Կայսրութեան և արևելքից խուժող սելջուկների հարուածների տակ, Հա-
յաստանը կորցնում էր իր անկախութիւնը և քայլքայում Բագրատունեաց իշ-
խանութիւնը, աստուածային նախախնամութեամբ, Հայոց աշխարհից հնոու՝
Կիլիկիայում կազմադրուեց ու զարգացաւ մի նոր հայկական պետութիւն, որ
հանդիսացաւ պահպանողը և շարունակողը հայ ժողովրդի քաղաքական գի-
տակցութեան, հոգևոր ժառանգութեան և ազգային մշակույթի:

Սուրբ Էջմիածնը և ժամանակառապէս Կիլիկիա փոխադրութ նաև Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը, նորաստեղծ հայ պետութեան հովանուին Աերքոյ, հոգևոր ու մշակութային սերտ կապէր պահպանելով Հայաստանի հոգևոր կենտրոնների մետ, եթե ու ինչքան թողարոտ էին լինում քաղաքական պայմանները:

Եւ այսպէս մօս երեք դար շարունակ 1080-ից մինչև 1375 թուականը, Կիլիկիան դարձար բուն Հայաստան աշխարհի անրածանելի մասը, նոր փառքով պասակելով հայ ժողովրդի պատմութեան գիրքը և անկորնելի արժեքներ ընծայելով հայ մշակույթի գաճատանը:

Հոգևոր դպրութեան, գրականութեան, արուեստների և գիտութեան զարգացման մի նոր դարաշրջան է բացում որ իրաւամբ արժանի է դատնում հայոց պատմութեան «արծաթէ դարը» կոչուելու:

Մանաւանդ ԺԲ դարը, հանդիսանում է կատարը կիլիկիան շրջանի հայ մշակույթի զարգացման, որի կենտրոնում փայլում է պայծառ անձնաւորութիւնը սուրբ Ներսէս Շնորհալու, շատախիլլ Պահլաւունեաց հայրենասէր իշխանական տան, թոռը հոչականուն Գրիգոր Մագիստրոսի:

Ապիրատ իշխանի որդին, Ներսէսը ծնուել է Տիուք գաւառի Ծովք հայրենական դղեակում, և փոքր հասակից մեծացել ու դատիքարակուել է Կարմիր վանքում, իր մեծ հօր Գրիգոր Վկայասէր կաթողիկոսի ձեռքի տակ, իբրև տասուցի ունենալով նոյն վաճքի գիտնական վանահայր Սուլիփանոս Մանուկ եպիսկոպոսը:

Հայրապետական Աթոռը, քաղաքական անսապահով պայմանների հետեւաքով 1150 թուականին, Ծովքից փոխադրուելով, նա ևս հետևում է իր կաթողիկոս եղբօրը՝ Գրիգոր Պահլաւունուն, և վերջնականապէս հաստատում է Հռոմեական կաթոլիկութեան պատուի կամաց հայութ 1166 թուականին, կոչուելով Ներսէս Դ Կղայեցի կաթողիկոս:

Այստեղ, Հռոմեական մանաւանդ, Ներսէս Շնորհալին, ոգեկան և իմացական աստուածաւոր ուժերի լիութեամբ, բոլորում է իր ստեղծագործական կեանքի ամենափայլուն շրջանը:

Պահլաւունի Ներսէսը իրավէս լի եղաւ շնորհներով՝ իբրև հոգեզարդ Հայրապետ Հայոց, իբրև ուղղափառամատ խորիմաց աստուածարան Մայր Եկեղեցւոյ, իբրև Աերշնեալ աղօթող բանաստեղծ, իբրև Առիրեալ կրթական մշակ և իբրև քաջակորով պաշտպան հայ պետութեան:

Առաջ Ներսէս Շնորհալու լուսաշող Աերկայութեան, պիտի մերկանար Լիլիկեան ԺԲ դարը իր փառքից և պիտի անշանար մի անկրկնելի շողարձակ բարձունք մեր մշակույթի պատմութեան հորիզոնից: Երանաշնորհ սուրբ Շնորհին փառաւորուել է անցեալում և փառաւորուելու է միշտ, իբրև բոլոր ժամանակների պարծանք ամենայն հայոց:

Երախտագէտ պրտով և երկիղածութեամբ, խոնարհում ենք հրաշաշնորհ Հայրապետի սուրբ յիշաւուկի և մեծ վաստակի առաջ, աներսանքով ջերմենանդ որ նա Բարձրելոյն Գամին առջև բարեխոս լինի ի խնդիր անսասանութեան և մի և անբաժան պահպանման առաքելական մեր Մայր Եկեղեցւու:

Յաւէտ յարգանք, լոյս և փառք սուրբ Ներսէս Շնորհալու նուիրական յիշաւուկին ու անթառամ գործին:

Այս տարի 18 օգոստոսին լրանում է մեծ Հայրապետի մահուան ութիարիւրամեակը: Այսու Մեր կոնդակով երջանիկ ենք հրաւէր կարդալու մեր Եկեղեցու նուիրապետութեան բոլոր Այսոռներին և յեմական-Եկեղեցական կազմակերպութիւններին, որ տարւոյս ընթացքին պատշաճ Եկեղեցական արարութեան մասնակիութեան ամենայն հայութիւններին:

դութիւններով, հանդիսաւոր նիստերով և հայերէն ու այլ լեզուներով հրատա-
րակութիւններով, տշնախմբուի ու պանծացուի՝ Ծնորթալի սուրբ Հայրապետը
Ամենայն Հայոց:

«Ճիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեց-
ևալը յես գնացից նոցու՝ նմանողը եղերուք հաւատոցն» (Երր. ԺԳ 7): Ամէն:

Կոչոց Դ.

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուալ կոնդամիս ի 16-Ա բանուարի

1973 փրկչական ամիս,
և ի տումարիս Բայոց Ռևիր,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՊ. 743

